

«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Օտար լեզվի ուսուցման մեթոդները

Առարկա՝ Անգլերեն

Ուսուցիչ՝ Հայկուհի Ավագյան

Դպրոց՝ Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոց

Ղեկավար՝ Անուշ Խաչիկյան

ԵՐԵՎԱՆ - 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	2
Օտար լեզվի ուսուցման մեթոդները	3
Եզրակացություն	189
Գրականության ցանկ	20

Ներածություն

Թեմայի արդիականությունը.

Օտար լեզվի ուսուցման մեթոդները առավելագույնս Օտար լեզուների դասավանդման մեթոդիկան ներկայացնում է ժամանակակից լեզվաքաղաքականության և լեզվակրթության գլխավոր մոտեցումներն ու պահանջները, լեզուների ուսուցման և ուսումնասրության հայեցակարգերը, սկզբունքները, մեթոդներն ու տեխնոլոգիաները, լեզվակրթության մեկնաբանումը սոցիալական քաղաքականության տեսանկյունից, մասնավորապես բազմալեզվության, քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական արժեքների սերմանումը, լեզվական միջոցների յուրացումը՝ ուղղված ժամանակակից լեզուների բնագավառում սովորողների հաղորդակցական կարողություններն ու հմտությունների զարգացմանը:

Արդյունավետ և նպաստավոր դարձնելու նպատակով ուսուցիչը նախ և առաջ պետք է կարևորի գիտելիքի և կրթության դերը: Յուրաքանչյուր մեր օրվա նպատակը պետք է լինի առաջ շարժվելու գաղափարը: Նորը ստեղծելու և նորովի ապրելու ձգտումը: Այս ճանապարհին հաջողակ լինելու կարևորագույն գործոններն են գիտելիքը և կրթությունը: Գիտելիքը ուժ է: Գիտելիքը ծառայում է մեզ ամբողջ կյանքում: Ամենահզոր բանը աշխարհում գիտելիքն է, որովհետև այն կարող է ստեղծել և ոչնչացնել կյանքը երկրագնդի վրա: Գիտելիքը ունակություն է օգտագործելու մեր գիտելիքը՝ օգնելու մյուսներին: Բացի այդ գիտելիքը շատ կարևոր գործիք է ունենալու դրական փոփոխություններ հասարակության մեջ կամ երկրում: Գիտելիքը բացում է հաջողության դուռը բոլորի համար: Կրթությունը մեզ տալիս է հնարավորություն առճակատ դուրս գալու կյանքի մարտահրավերներին: Միայն երբ մարդիկ կռահում են թե՛ ինչ կարևորություն ունի կրթությունը, նրանք սկսում են այն համարել անհրաժեշտություն ավելի լավ կյանքի համար:

Ուսուցչի խնդիրն է՝ յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որոնք յուրաքանչյուրին հնարավորություն կտան ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, ինչպիսիք են՝ համագործակցության ուսուցումը, նախագծային մեթոդը, նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործումը, համացանցը, օգնում են իրականացնել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցում, ապահովվում են ահատական ուսուցում՝ ելնելով սովորողի հնարավորություններից, մակարդակից, հակումներից:

Օտար լեզվի ուսուցման մեթոդները

Այժմ ներկայացնեն իմ անձնական մեթոդները, որոնք կնքվել են մեծ հաջողությամբ:

Մեթոդ 1

Նախապես զգուշացնում են որոշ քանակի աշակերտների, պատրաստվեն որպեսզի վարեն դաս ինքնուրույն: Երեխաները ոգևորված պատրաստվում են և խոսում են դասին բացառապես անգլերենով:

Մեթոդ 2

Օգտվելով Randall Listening կայքից (ESL Lab) իրականացրել են Listening Task: Ցուրաքանչյուր նախադասությունը ունկնդրելուց հետո մենք անջատում ենք ձայնագրությունը, իսկ երեխաները փորձում են կրկնել:

Մեթոդ 3

Անգլերեն-Անգլերեն բառի սահմանումներ: Նոր բառապաշարը մատուցում են հետևյալ կերպով: Բառը գրում են գրատախտակին, որից հետո տալիս են բառի անգլերեն սահմանումը, որպեսզի երեխաները գուշակեն հայերեն թարգմանությունը:

Մեթոդ 4

Թույլ տվեք նշել այն փաստը, որ բավականին արդյունավետ է քերականության հրաշալի հիմք ապահովել 2003 թվի Շտեմարանի օգնությամբ հղկելով բառապաշարը նախ, այնուհետև նախդիրներ բաժինը (Proud of, rich in, etc) և նաև հետաքրքիր արտահայտությունների վերծանում: Ժամանակային ձևերը մատուցում, հարցեր (General, Disjunctive, Alternative and Special): Հաջորդ բաժինը մատուցում է Passive Voice, այնուհետև անուղղակի խոսք և հայերենից անգլերեն բարդ թարգմանություն: Գրքի վերջին բաժնի օգնությամբ սովորեցնում են կազմել նախադասություններ տրված նախադասության սկիզբը շարունակելով: (He said, I am sure, I know, etc)

Մեթոդ 5

Բավականին արդյունավետ են համարում անգլերեն լեզվով անգիր տեքստեր սովորել, օգտվելով toppr.essay լինկից: Երեխան սկսում է մտածել անգլերեն և իր խոսքը հարստանում է հրաշալի արտահայտություններով

Մեթոդ 6

Շաբաթվա մեջ մի անգամ դասի 5 րոպեն տրամադրում են անգլերեն լեզվով երգ երգելուն: Երեխաներն ունենում են հրաշալի տրամադրություն, որն էլ ապահովում է դրական դասապրոցես:

Մեթոդ 7

Հեռախոսի ժամացույցի օգնությամբ ֆիքսում են 2 րոպե, որի ընթացքում երեխան խոսում է տվյալ թեմայի շուրջ (Իմ կարիերան, Կրթությունը, Մշակույթը)

Մեթոդ 8

Smart board-ի օգնությամբ կազմակերպում են անգլերեն լեզվով ֆիլմի դիտում պարբերաբար դադարեցնելով ֆիլմի ընթացքը որպեսզի երեխաները գրառումներ կատարեն հարցնեն անծանոթ բառերը: Ֆիլմը դիտելուց հետո սկսվում է դասքննարկում, երեխաները անգլերեն լեզվով ներկայացնում են ֆիլմի բարոյախոսությունը, կերպարների առավելությունները և թերությունները համեմատում են հերոսներին իրենց ծանոթ մարդկանց հետ և ներկայացնում են նոր ձեռք բերած բառաքանակը:

Գոյություն ունի լեզուն ուսումնասիրելու երեք մոտեցում և բոլոր մեթոդները պայմանականորեն բաժանվում են հետևյալ խմբերի.

Կառուցվածքային մոտեցում (լեզուն դիտվում է որպես քերականական էլեմենտների միմյանց կապակցված համակարգ)	Ֆունկցիոնալ մոտեցում, որտեղ լեզուն հանդիսանում է որոշակի գործառույթների /ֆունկցիաների/ արտահայտման և իրականացման միջոց:	Ինտերակտիվ մոտեցում. լեզուն հանդիսանում է սոցիալական հարաբերությունների ստեղծման ու հաստատման գործիք:
<u>Քերականական թարգմանության մեթոդ (The Grammar Translation Method)</u> – Այս մեթոդը մեզ հայտնի է դեռ	<u>Լեզվի հրավիճակային ուսուցում – Բանավոր մոտեցում (Situational language teaching (Oral approach))</u> – Հիմնված է լեզվի կառուցվածքի վրա: Սովորողը կրկնության	<u>Ուղղակի մեթոդ (The direct method)</u> – Նախատեսվում է, որ օտար լեզուն ուսուցանվում է

<p>սովետական ժամանակներից, որը հիմնված է գրավոր թարգմանության և ընթերցանության վրա:</p>	<p>միջոցով սովորում է առավելագույնս հաճախ օգտագործվող բառերն ու արտահայտությունները և դրանք անմիջապես օգտագործում պրակտիկայում:</p>	<p>մայրենի լեզվի նման, այսինքն ինքը, սովորեցնելու պրոցեսն անցկացվում է հենց օտար լեզվով, իսկ մայրենի լեզվի օգտագործումն այդ ընթացքում առավելագույնս բացառվում է:</p>
<p><u>Աուդիո – լեզվական մեթոդ (Audio-lingual method)</u>-Այս մեթոդի էությունը նրանում է, որ սովորողն անընդհատ լսում ու կրկնում է օտար լեզվով ձայնագրությունը:</p>	<p><u>Ուղղորդված պրակտիկա /փորձառություն/ (Directed practice)</u>- Այս դեպքում սովորողն անընդհատ կրկնում է արտահայտությունները մինչև վերջիններիս մեխանիկորեն անգիր անելը:</p>	<p><u>Հաջորդականության մեթոդ (The series method)</u>- Բառապաշարի հարստացում հաջորդաբար կատարվող գործողություններն անընդհատ կրկնելով: Օր.՝ Ամեն առավոտ ես արթնանում եմ ժամը 7-ին, լոգանք եմ ընդունում, հագնվում եմ, նախաճաշում եմ, սրճում եմ, գնում դպրոց, դասերից հետո ընկերներով հավաքվում ենք և այլն:</p>
<p><u>(Proprioceptive method)</u>- Մեթոդի նպատակն է միաժամանակ աշխատանքի մեջ</p>		<p><u>Խոսակցական ուսուցում (Communicative language teaching)</u>-</p>

<p>ներգրավել ուղեղի ճանաչողական, նյարդաբանական և լսողական ֆունկցիաները:</p>		<p>Նախատեսում է ուսումնասիրվող լեզվի օգտագործումը ոչ միայն հանձնարարությունն եր կատարելու այլև դասավանդողի և մյուս սովորողների հետ շփվելու համար: Այն ներառում է այնպիսի ինտերակտիվ վարժություններ, ինչպիսիք են երկխոսությունները, դերախաղերը, խմբային աշխատանքները և այլն:</p>
		<p><u>Ընկղմում լեզվի մեջ</u> <u>(Language immersion)-</u> Մերթոդն օգտագործվում է տարրական դպրոցում, առաջ քաշելով երկլեզվության (բիլինգվիզմ) տարբերակը՝ դպրոցական ծրագրով նախատեսված առարկաներն</p>

		<p>ուսուցանելով օտար լեզվով:</p>
		<p><u>Լռության մեթոդ</u> (<i>Silent Way</i>)-Այս դեպքում ուսուցիչն ավելի շատ լռում է, քան խոսում: Արտասանությունը սովորեցնելով տարրական դասարաններում, ուսուցիչն օգտագործում է տարատեսակ գունավոր աղյուսակներ, որտեղ ամեն մի գույնը կամ նշանը մի հնչյուն են նշանակում:</p>
		<p><u>Բնական մոտեցում</u> (<i>Natural approach</i>)- Շեշտը դրվում է այն հասկացության վրա, որ սովորողը կարող է սովորել ամեն ինչ:</p>
		<p><u>Ֆիզիկական արձագանքման մեթոդ</u> (<i>Total Physical Response</i>)-Առաջին փուլում սովորողները պասսիվ ընկալում է նյութը՝ առանց այն օգտագործելու: Երկրորդ փուլում</p>

		<p>նրանք պետք է արձագանքեն որոշ բառերի, հատկապես բայերին, օրինակ, դրանք կատարելով: Եվ միայն այս երկու փուլը հաղթահարելուց հետո միայն սովորողներն իրենք են գործածում յուրացրած նյութը:</p>
		<p><u>Կարդալու և պատմելու մեթոդ</u> <i>(Teaching proficiency trough Reading and Storytelling)-</i> Համարվում է Ֆիզիկական արձագանքման մեթոդի ենթաճյուղ: Դասավանդողը հարուստ բառապաշարով փոքրիկ պատմություններ է պատմում սովորողներին, հետո էլ հարցեր տալիս պատմության վերաբերյալ:</p>
		<p><u>Դոգմա մեթոդ (Dogme language teaching)-</u> Այս մեթոդը</p>

		<p>հրաժարվում է լեզվի ուսուցման ընթացքում որևէ դասագիրք օգտագործելուց՝ շեշտադրելով դասավանդող-սովորող շփումը: Ուսուցողական նյութերը, որոնցից պետք է օգտվի սովորողը հենց իր կողմից ստեղծված նյութերը պետք էլինեն:</p>
--	--	--

Անգլերեն բանավոր հաղորդակցության ուսուցումը բարդ համակարգ է, որը ներառում է մի շարք մտավոր գործընթացներ՝ նոր տեղեկատվություն ընկալելը, մտապահելը, ճանաչելը, ինչպես նաև մշակելն ու փոխանցելը: Դրանցից յուրաքանչյուրն էլ իր հերթին ներկայացնում է ֆիզիկական և մտավոր ունակությունների և գործողությունների համադրություն՝ պայմանավորված մի շարք հատկանիշներով՝ սովորողի տարիքը, մտավոր ներուժը, աշխարհայացքը, ընդհանուր գիտելիքները, լեզվամտածողությունը, լեզվագագացողությունը և այլն:

Անգլերեն բանավոր խոսքի ուսուցման գործընթացի արդյունավետությունը ապահովելու համար շատ կարևոր է առանձնացնել լեզվական կոմպետենցիայի այն բաղադրիչները, որոնք սահմանագծվում են անգլերեն լեզվի բանավոր և գրավոր խոսքում: Դրանք են՝ բառապաշարը, քերականությունը, հնչյունաբանությունը:

Քերականություն: Բանավոր խոսքում հաճախակի են կարճ զրույցները, երկխոսությունները, որոնցում յուրաքանչյուր միտք կարող է արտահայտվել ոչ ավել, քան մեկ բառով կամ կարճ կապակցությամբ, օրինակ,

- A. Coffee?
- B. Thanks!
- A. Milk?
- B. With pleasure!

Նմանօրինակ գրույցները հնարավոր են, սակայն դրանք կարճ են, տարբեր թեմաների շուրջ երկար շարունակելը փաստացի անհնար է դառնում: Հետևաբար, ավելի իմաստավից խոսակցություն ծավալելու համար անհրաժեշտ է հաշվի առնել և հավաքագրել լեզվի քերականական «ռեսուրսները» նույնպես: Հարկ է նշել, որ անգլերենն ունի որոշ առանձնահատուկություններ, որոնք սահմանագծվում են գրավոր և բանավոր խոսքում: Այսպես. եթե գրավոր խոսքում գերակայում է ենթակա (subject)+բայ(verb)+խնդիր(object) կառույցը, ապա բանավոր խոսքում առավել գործածական են ձգվող, այլընտրանքային կառույցները: Գրավոր խոսքում նախապատվությունը տրվում է անուղղակի խոսքին, մինչդեռ բանավոր խոսքում գերակշռում է ուղղակի խոսքը: Գրավոր խոսքում նախընտրելի է պարզ խոսքը, իսկ բանավորում հիմնականում անորոշ, ոչ պարզ խոսքն է կիրառական: Գրավոր խոսքում քիչ են դադարները, մինչդեռ բանավորում առկա են բազմաթիվ դադարներ: Եվ վերջապես նշենք, որ գրավոր խոսքում կատարողական էֆեկտներ չկան, սակայն հակառակ դրան, բանավորում դրանք իրենց ուրույն տեղն են զբաղեցնում՝ ներառելով.

- o տատանումներ,

- o կրկնություններ,

- o սխալ մեկնարկ,

- o անավարտություն,

- o շարահյուսական խառնումներ(syntactical blends):

Վերոնշյալով չեն սահմանափակվում գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկությունները: Այլ տարբերակիչ գծեր ևս գոյություն ունեն: Օրինակ՝ բանավոր խոսքում անձնական և որոշյալ դերանունները (I, you, my, our...) ավելի հաճախ են գործածվում, քան գրավորում: Բացի այդ, գոյություն ունեն բայի ժամանակաձևերի, սեռերի բաշխման և հաճախականության առանձնահատուկ գծեր ևս: Համառոտ ներկայացնենք դրանք: Այսպես՝ բանավոր խոսքում. ներկա ժամանակաձևը կրկնակի գերազանցում է անցյալ ժամանակաձևին,

- o ներկա և անցյալ վաղակատար շարունակական ձևերը հազվադեպ են,

- o կրավորական բայերը կազմում են ընդամենը 2%ը,

- o will, would և can մոդալ բայերը շատ գործածական են:

Այս տեսանկյունից իրադրական վարժությունները ուսուցման գործընթաց ներմուծելը շատ արդյունավետ է, քանի որ սովորողները դրանք կատարում են՝ հիմնվելով իրենց կենսափորձի, առօրյա կյանքի փաստերի, իրողությունների վրա: Բացի այդ, իրադրությունները կարող են ստեղծվել տարբեր աղբյուրների միջոցով՝ նկարներ, ֆիլմեր, աղյուսակներ, իրակություններ և այլն:

Հաջորդիվ առաջարկում ենք հետևյալ իրադրային գործընթացները՝ նպատակաուղղված քերականական լեզվանյութի յուրացմանը.

Discuss plans for a class trip to the zoo, bank, gallery...	Future tense Ifclauses Conditional tense
Give directions to another person to get to a store, the post office, or a bank using a map.	Present tense Nonreferential it
Describe a past vacation, weekend, etc.	Simple past tense Question formation Forms of verb to do Word order in negation
Role play: a shopping trip to buy a gift for a family member or friend.	May, might Collective nouns and quantifiers (any, some, several, etc.) Indirect object
Answer information questions: Name, address, phone number, etc.	Present tense of verb to be Possessive adjectives Locative prepositions
Explain anybody how to find cooking items in your kitchen	

Իրադրական վարժությունները սովորողներին հնարավորություն են տալիս ձևավորելու քերականական կառուցվածքը խոսքային գործունեության մեջ օգտագործելու կարողություն¹:

Ժամանակակից մեթոդիկայում իրադրային ուսուցումը (situational approach) շատ արդյունավետ է, քանի որ հետաքրքրաշարժ է, և սովորողները կարող են միաժամանակ դրսևորել իրենց լեզվահաղորդակցական կարողությունները, հանրամշակութային փորձը: Ուսուցչի խնդիրն է՝ մասնագիտական վարպետությամբ հուշել թեմաներ, որոնք պարունակում են պատշաճ լեզվանյութ և սովորողներին մղում դրական փոխներգործության: Ներկայացված իրադրություններում քերականության ուսուցումը


¹ Mora J. Teaching Grammar in Context. San Diego State University, 2010. Available: <http://englishenkaysway.blogspot.com/> ; p. 5

իրականացվում է փոխներգործության համադրությամբ, ներառյալ համապատասխան լեզվանյութը: Սովորողներին առաջարկվում են բառեր, արտահայտություններ, խոսքային նմուշներ, նրանք պետք է դրանք կիրառեն համատեքստում, իրադրություններում կամ դերային խաղերում:

Այսպիսով, պարզ է դառնում, որ ինչպես բառապաշարի, այնպես էլ քերականության ուսուցման ժամանակ կիրառվող մեթոդներն ու մոտեցումները իրականում նպատակաուղղված են սովորողների լեզվահաղորդակցական կարողությունների զարգացմանը, լինեն դրանք ընկալողական թե՛ վերարտադրողական:

Ուսուցիչը պետք է իմանա, թե ինչ նպատակով է ներմուծվում այս կամ այն քերականական նյութը՝ մտքերն արտահայտելու (վերարտադրողական քերականություն), թե ճանաչելու և հասկանալու համար (ընկալողական քերականություն): Քերականության և խոսքային գործունեության տարբեր տեսակների հարաբերությունը կարելի է պատկերել հետևյալ գծապատկերով:

Քերականության և խոսքային գործունեության տեսակների հարաբերությունը



Գծապատկերից պարզ է դառնում, որ վերարտադրողական քերականությունը նպատակաուղղված է խոսելու և գրելու կարողությունների զարգացմանը, իսկ ընկալողականը՝ ունկնդրելու և ընթերցելու:

Վերարտադրողական քերականական հմտությունները սովորողները պետք է ձեռք բերեն նաև տեքստի բովանդակությունն ըմբռնելու համար: Հետևաբար, քերականական վարժությունները մշակելիս կամ ընտրելիս պետք է հաշվի առնել խոսքային գործունեության առանձին տեսակների յուրահատկությունները, նյութի և վարժությունների բովանդակության բարդացումը, համատեքստի մեջ ուսուցանվող կառուցվածքի օգտագործումը²: Ամենից առաջ քերականության ուսուցումը ուղղված է սովորողների քերականական կոմպետենցիայի ձևավորմանը/զարգացմանը, նրանց մտավոր գործունեության ակտիվացմանը: Ինչպես նշվում է ժամանակակից եվրոպական կրթության հիմնարար փաստաթղթում՝ «Լեզուների իմացության իրազեկության համաեվրոպական համակարգում» բառապաշարային, քերականական գիտելիքներն ու կարողությունները հնչյունաբանական հմտությունների հետ միասին կազմում են

սովորողների լեզվական կոմպետենցիան, որն էլ նրանց ընդհանուր լեզվահաղորդակցական կոմպետենցիայի առանցքն է³:

Բառապաշար: Նախքան բառապաշարի ուսուցումը կազմակերպելը անհրաժեշտ է մշակել և հստակեցնել ռազմավարություն, որը ներառում է հետևյալ փուլերը՝

- բառի ներկայացում/բացատրում,
- բառի մտապահում/ամրապնդում,
- բառի գործածում հաղորդակցության մեջ:

Բառապաշարային գիտելիքները զարգացնող ռազմավարությունները անընդհատ փոփոխվում, համալրվում են նոր վարժություններով, քանի որ ժամանակի հետ փոխվում են նաև ուսուցման մեթոդները, մոտեցումները, նպատակներն ու հասարակական պատվերը: Բառապաշարի ուսուցումը լեզվակրթության առանցքն է, առանց որի անհնար է տվյալ լեզվով հաղորդակցվելը: Հաղորդակցությունը բարելավվում է ամենից առաջ բառապաշարի հարստացմամբ և ճիշտ գործածությամբ: Կարևոր են նաև սովորողների քերականական, հնչյունաբանական գիտելիքները, ինչպես նաև հանրամշակութային, գործաբանական, խոսույթային, փոխհատուցման կարողությունները:

Այսօր, երբ սովորողների հետաքրքրությունները բազմազան են ու բազմապիսի, եական է օտար լեզվի ուսուցումը հնարավորինս հաճելի ու հետաքրքիր

² Thornbury S., How to Teach Grammar, Pearson, Longman, 2010, p. 69

³ Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Մտրասբուրգ, Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով, Լեզվի քաղաքականության վարչություն, Թարգմանություն, խմբագրությամբ՝ Ս. Զոլյան, Մ. Աստվածատրյան և ուրիշներ, Երևան, 2005, 278 էջ. 69

կազմակերպելը: Այս կապակցությամբ նոր բառեր ներմուծելիս մենք չպետք է բավարարվենք ուսուցման ավանդական մեթոդներով ու միջոցներով, այլ փորձենք ներկայացնել հնարավորինս նոր ու հետաքրքիր լուծումներ՝ բառապաշարը ուսուցանենք հաղորդակցական համատեքստում, փոխներգործուն միջավայրում: Այսպես, դիտարկենք §ԿՌԱՀԻԲ ԻՄԱՍՏԸ – Մտքեր, որ մեզ օգնում են ապրելու՜ վարժությունը – “GUESS THE MEANING, Gaps and guessing: Thoughts that help us to live”. Նշենք, որ աշակերտները սովորաբար հաճույքով են կատարում այս վարժությունը, հատկապես, եթե ուսուցիչը նախօրոք ներկայացնում է քննարկման թեման:

1. Սահմանված ժամանակաչափը՝ տասը րոպե:

2. Ընթացքը:

Փուլ 1.

Ուսուցիչը գրատախտակին գրում է մի ասույթ, որում որոշ բառեր նշված չեն, օրինակ, "A room without is like a body without soul." (Cicero).

Փուլ 2.

Ուսուցիչը առաջարկում է սովորողներին կռահել այդ բառը՝ ելնելով համատեքստից: Նրանց ուշադրությունը պետք է ուղղել խոսքի հեղինակի վրա: Ուսուցիչը նշում է, որ եթե հեղինակը, օրինակ Ֆրանկլինն է, Մ. Տվենը, Բ. Շոուն և այլք, ուրեմն մտքերը կլինեն իմաստուն կամ հումորային:

Փուլ 3.

Երբ բաց թողնված բառերը լրացվում են (օրինակ "A room without books is like a body without soul." (Cicero), ուսուցիչը սկսում է քննարկում այն թեմայի շուրջ, որն սկզբում ներկայացրել էր, օրինակ՝

Do you agree with the statement?

How do you understand it?

Is it really so in your life?

Արդյունքում ստեղծվում է բարեհունչ հաղորդակցական միջավայր, սովորողները ներգրավվում են խոսքային գործունեության ոլորտ, նրանցից յուրաքանչյուրը ձգտում է արտահայտել իր կարծիքը:

Այսպիսով, բառանյութն ընտրելիս կամ ներմուծելիս էական է հաղորդակցության թեման, այն պետք է լինի արժանահավատ (authentic), սովորողներին հետաքրքիր: Դա շատ կարևոր է նրանց սովորելու ներքին պահանջմունքը խթանելու, ակտիվ փոխներգործություն ծավալելու համար: Մյուս կողմից՝ նմանատիպ վարժությունների կանոնավոր ներմուծման արդյունքում կզարգանան սովորողների նաև դատողական, դիսկուրսային, վերլուծահամադրական խոսքային ունակությունները:

Հնչյունաբանություն: Բանավոր խոսքի ուսուցման գործընթացում էական է առողջանության կարևորության հաշվառումը: Այն ծառայում է՝ տարանջատելու հոսքը, ընդգծելու բառի առանցքային իմաստը:

Սովորաբար ժամանակակից անգլերենի առողջանությունը յուրացնում են վարժանքների ու կրկնավարժանքների միջոցով: Առողջանությամբ կարելի է փոխել նախադասության կամ բառի ողջ իմաստը: Ուստի դասագրքերը բացի, շատ կարևոր է, որ սովորողները լսեն և կրկնօրինակեն լեզվակիրների խոսքը (live speech): Այս կապակցությամբ տեղին է նշել նաև, որ անգլերենում շեշտի միջոցով խոսողը տարբերակում է գոյական, բայ խոսքի մասերը:

Հաջորդիվ ներկայացնում ենք բառեր՝ գոյականներ իրենց համապատասխան բայերով: Երբ շեշտվում է առաջին վանկը, բառը գոյական է, իսկ երբ վերջինը՝ բայ:

<i>PREsent preSENT</i>	<i>COMpress comPRESS</i>	<i>REFuse reFUSE</i>
<i>REcord reCORD</i>	<i>COMpound COMPOUND</i>	<i>PROject proJECT</i>
<i>CONtract conTRACT</i>	<i>COMbine comBINE</i>	<i>OBject object</i>
<i>CONtest conTEST</i>	<i>COMbat comBAT</i>	<i>SUBject subJECT</i>
<i>INcrease inCREASE</i>	<i>DEcrease deCREASE</i>	<i>REject reJECT</i>

Բացառություն. Կան որոշ միավորներ, որոնք նման են վերոնշյալ բառերին, սակայն նրանք չունեն շեշտի փոփոխություն, օրինակ. *CONtact, DIScount, FInance, INterest*; նաև *conSENT, conTROL, disGUISE, diVORCE*.

Այնուամենայնիվ, յուրաքանչյուր բառ ունի շեշտ: Հարկ է նշել, որ շատ հաճախ նախադասության իմաստը կարող է փոխվել շեշտի փոփոխման հետ, օրինակ, հետևյալ նախադասության մեջ.

"I don't like to be late."

ա) Շեշտը *"I"* բառի վրա. իմաստն այն է, որ բոլորը սիրում են ուշանալ, իսկ խոսողը՝ ոչ:

բ) Շեշտը *"don't"* բառի վրա. բոլորը գտնում են, որ խոսողը սիրում է ուշանալ, բայց նա չի սիրում:

գ) Շեշտը *"like"* բառի վրա. խոսողը ցույց է տալիս, որ ինքը չի ընդունում ուշանալը կամ նույնիսկ ատում է:

դ) Շեշտը *"late"* բառի վրա. խոսողը ցույց է տալիս, որ ինքն ամենից շատ ատում է ուշանալը:

Օրինակից հետևում է, որ տարբեր բառեր շեշտելու դեպքում փոխվում է նախադասության իմաստը:

Շատ անգամ սովորողները անգլերենով հաղորդակցվելիս չեն հետևում առողջանությանը: Որպես հետևանք՝ նրանց խոսքը չի հնչում գեղեցիկ, փոխարենը այն ձանձրալի ու անհրապույր է թվում: Ուստի ուսուցիչը պետք է ճիշտ ցուցումներ տա աշակերտներին, որ նրանք ոչ միայն գրագետ խոսեն, այլև հետևեն խոսքի ճիշտ արտաբերմանն ու մեղեդայնությանը:

Կարևոր է ևս մեկ առանձնահատկություն, որը հատուկ է անգլերենի բանավոր խոսքին: Դա վերաբերում է բարձր տոնայնության (high pitch) և նոր տեղեկության կապին: Բանավոր խոսքում տոնային միավորների վերջում տոնի բարձրությունը ենթադրում է խոսքի շարունակություն, իսկ ցածր տոնը՝ ավարտ: Հետևաբար, ուսուցման գործընթացում այս առանձնահատկությունը ևս պետք է նկատել:

Ամենից առաջ ճիշտ կլինի հնչունականարտասանական աշխատանքները զուգակցել բառապաշարի և քերականության ուսուցման հետ: Պետք է միշտ հնարավորություն տալ սովորողներին՝ հղկել իրենց արտասանությունը, քաջալերել նրանց՝ գրելու տվյալ բառի ուղղագրությունն ու հնչույթների տառադարձումը:

Ուսուցման ավանդական մեթոդներին զուգահեռ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը, հարկավոր է կիրառել նաև ուսուցան ակտիվ մեթոդներ: Ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Ներկայացնենք օտար լեզվի դասավանդման մի քանի ժամանակակից մեթոդներ, որոնք կարող են առավել արդյունավետ դարձնել ուսումնառության գործընթացը.

- Դասավանդման համագործակցային-խմբային մեթոդ
- Քեյս մեթոդը օտար լեզվի դասավանդման պրակտիկայում
- Տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվի դասավանդման գործընթացում:

Լեզվի ուսուցման ընթացքում արդյունավետության առումով առաջ է գալիս **համատեղ ուսուցման մեթոդը**: Համատեղ ուսուցման մեթոդը կիրառվում է աշխարհի շատ երկրներում: Այս ուսուցումը հնարավորություն է տալիս աշակերտներին ավելի անկաշկանդ և ստեղծագործ ձևով մոտենալ հարցին: Փորձը ցույց է տալիս, որ միասին սովորելը ոչ միայն հեշտ է և հետաքրքիր, բայց և նկատելիորեն ավելի արդյունավետ է:

Խմբային աշխատանքի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները⁴.

- Խմբում նպատակաուղղված միավորել տարբեր հմտությունների աշակերտների

⁴ Kumaravadivelu B. Understanding Language Teaching. From Method to Postmethod, San Jode State University, 2006, pp. 114-134

- Խնդիրները, որոնք առաջադրվում են քննարկման համար, պետք է լինեն արդիական և հասկանալի, առաջացնեն գործնական կիրառության համար հետաքրքրություն
- Անհրաժեշտ է ընտրել խմբի ավագ, ով պետք է իր վրա վերցնի համակարգողի ուղղորդողի դեր:

Իրավիճակի վերլուծության քեյս մեթոդ: Այս մեթոդը հիմնականում շեշտը դնում է սովորողների ակտիվ մտածողության վրա: Քեյս մեթոդը օտար լեզվի դասավանդման պրակտիկայում հնարավորություն է տալիս զարգացնելու աշակերտների ստեղծագործական և քննադատական մտածողությունը՝ գործածելով դրանք խնդիրների լուծման ժամանակ, ինչպես նաև վերլուծելու ստացված արդյունքները, ցույց տալու դրանց կիրառելիությունը նմանատիպ այլ իրավիճակների համար, քանի որ ստեղծագործական, ճանաչողական և մասնագիտական գործունեության ժամանակ աշակերտները միաժամանակ կիրառելու են իրենց մտավոր բոլոր հմտություններն ու կարողությունները:

Տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվի դասավանդման գործընթացում:

Ժամանակակից կրթական համակարգում գնալով ավելի շատ է շեշտը դրվում տեղեկատվության հետ աշխատանքի վրա: Աշակերտների համար կարևոր է դառնում կարողանալ ինքնուրույն ձեռք բերել լրացուցիչ նյութեր, կարծիք հաղորդել կարդացածի վերաբերյալ և այլն: Օտար լեզվով տեղեկատվության հետ աշխատանքը, հատկապես, եթե հաշվի առնենք այն հնարավորությունները, որոնք մեզ է առաջարկում համացանցը, դառնում է բավականին հրատապ:

Համակարգիչն արդյունավետ և հարմար օգնական է օտար լեզուների ուսուցման ժամանակ, քանի որ լեզու սովորելիս ինտերակտիվ շփման առկայությունը պարտադիր պայման է: Հատկապես վերջերս համակարգչի օգնությամբ օտար լեզուների ուսուցումը լայն տարածում է գտել: Համակարգչային ուսուցման ունի հսկայական խթանիչ՝ մոտիվացիոն ներուժ:

Համակարգչի միջոցով օտար լեզվի ուսուցման տեխնիկական հնարավորությունները շատ լայն են: Վերջին մի քանի տարիների ընթացքում փորձեր կատարվեցին ստեղծելու ծրագրեր, որոնք հաջողությամբ կհաղթահարեին մեքենայական թարգմանությունը: Սակայն հենց նույն սկզբունքով ստեղծվել են քերականության և ուղղագրության ստուգման ծրագրեր: Ինչ վերաբերում է բանավոր խոսքի ուսուցմանը, որը երկար ժամանակ մնում էր օտար լեզուների համակարգչային ուսուցման թույլ տեղը, ապա այդ բնագավառում կտրուկ շարժ նկատվեց

մուլտիմեդիայի մշակումից հետո՝ սարքավորումների մի ամբողջ շարք, որը նկատելիորեն ընդլայնում է համակարգչի հնարավորությունները:

Համակարգչային որոշ ծրագրեր նույնիսկ թույլ են տալիս օգտագործողին ձայնագրել սեփական խոսքը, իսկ այնուհետև լսել այն և համեմատել լեզվակիրների արտասանության հետ կամ մոնիտորի վրա տեսնել սեփական ձայնագրության դիագրաման:

Համակարգչային տեխնոլոգիայի ևս մեկ խոստումնալից նորարարություն է ինտերակտիվ տեսագրությունը: Ծրագիրն իրենից ներկայացնում է ֆիլմ օտար լեզվով:

Համակարգչային ուսուցման հիմնական թերությունը դեռևս մնում է բանավոր ուղիղ երկխոսության անհնարիությունը համակարգչի հետ: Սակայն տեխնիկական առաջընթացն այս բնագավառում հնարավորություն է տալիս վստահ հույս հայտնելու, որ խոսքի ճանաչման ծրագրերը մոտակա ժամանակներում կդառնան օտար լեզուներ սովորեցնող ծրագրերի անբաժանելի մասը:

Եզրակացություն

Մեր օտար լեզվի ուսուցման մեթոդների ուսումնասիրությունը մոտեցավ իր տրամաբանական ավարտին՝ եզրակացությունը: Բոլոր վերոհիշյալ մեթոդները արդյունավետ կիրառելու դեպքում իսկապես ծառայում են իրենց նպատակին՝ ապահովելով լեզվական հմտություններ և կարողություններ: Հմուտ և փորձառու ուսուցիչը նա է՝ ով այս մեթոդներից զատ լսում է աշակերտների առաջարկած մեթոդներին, հետևում է նրանց պրակտիկ խորհուրդներին: Կարծում եմ, որ ամենահետաքրքրաշարժ մեթոդները ձևավորվում են մեր անձնական փորձի և երեխաների առաջարկածների հիման վրա:

Այսպիսով, օտար լեզուների դասավանդման ժամանակ ամենաարդյունավետը կլինեն այն մեթոդները, մեթոդները, որոնք մի կողմից կապահովեն լեզվական նյութի յուրացման ավտոմատացված հմտությունների ձևավորում (քառապաշար, քերականություն, հնչյունաբանություն, բնորոշ արտահայտություններ), մյուս կողմից՝ ձեռքը, կտրամադրի բավարար գիտելիքներ և հմտություններ ինքնուրույն ուսուցման համար. աշխատանք. Պետք է նաև նկատի ունենալ, որ դպրոցում մենք սովորեցնում ենք և՛ մտքերն արտահայտելու կարողություն (խոսել), և՛ բանավոր և գրավոր

տեքստերում ներառված ուրիշների մտքերը հասկանալու կարողություն (լսելով ըմբռնում, կարդալ): Հոգելեզվաբանության առումով սա խոսքի սերունդն ու ճանաչումն է: Ինչպես գիտեք, դասավանդման մեթոդները կախված են ուսուցման նպատակների, բովանդակությունը և փուլերը. Նպատակին համապատասխան՝ օտար լեզվի գործնական տիրապետում, վերապատրաստման բովանդակությունը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ լեզվական նյութում ավտոմատացված հմտությունների ձևավորում, տարբեր տեսակի խոսքի գործունեության հմտությունների զարգացում (խոսել, հասկանալ խոսքը ականջ, ընթերցանություն), ինչպես նաև գիտելիքների որոշակի շրջանակ ուսուցման տարբեր փուլերում. գործողություններ և գործողություններ կատարելու կանոններ-ցուցումներ, նյութերով, կանոններ-ընդհանրացումներ, որոնք օգնում են ուսանողներին ստեղծել որոշակի, ամենատարրական գաղափարներ լեզվի համակարգի մասին: ուսումնասիրված, որն անհրաժեշտ է հանրակրթության տեսանկյունից:

Գրականության ցանկ

1. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Ստրասբուրգ, Թարգմանություն, իմբագրությամբ՝ Ս. Զոլյան, Մ. Աստվածատրյան և ուրիշներ, Երևան, 2005, 278 էջ
2. Beare K., Teaching grammar in an ESL/EFL Setting. - The Internet TESL Journal, Vol. X, N 7, July, 2004, Available: <http://iteslj.org>.
3. Harmer J., How To Teach English, Pearson, Longman, 2010. 288 p.
4. Mora J. Teaching Grammar in Context. San Diego State University, 2010. Available: <http://englishenkaysway.blogspot.com/>
5. Thornbury S., How to Teach Grammar, Pearson, Longman, 2010. 182 p
6. Kumaravadivelu B. Understanding Language Teaching. From Method to Postmethod, San Jode State University, 2006.